ՀԱՍՊ-Արխ. ՍՍՀ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ ՔՈ

Սովետական Հայաստան

ՕՐԳԱՆ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ԵՎ ՀՈՂԿԿԿՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՐԶԿՈՄԻՆԵՐԻ
„СОВЕТАКАН АКАСТАН". Орган ЦК КПА и Советов депутатов трудящихся Армянской ССР

36-րդ տարի
№ 154 (10767)

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 4 ՀՈՒԼԻՍԻ 1956 Թ.

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.

ԱՅՍՕՐ

— ՍՍՌՄ Դեկտեմբերյան Սովետի Նախագահության Նախագահ Կ. Ե. Վորոշիլովի հեռագիրը ԱՄՆ-ի պրեզիդենտ Դ. Էյզենհաուերին Միացյալ Նահանգների Ազգային տոնի առթիվ (1-ին էջ):

— Պատմական մեծ նշանակություն ունեցող փաստաթուղթ («ՊՐԱՎԴԱ»-ի հուլիսի 3-ի առաջնորդողը) (1-ին էջ):

— Դահաժամանակ Նորադոմ Սիամնուկը այցելեց ՍՍՌՄ Դեկտեմբերյան Սովետի Նախագահության Նախագահ Կ. Ե. Վորոշիլովին (1-ին էջ):

— Ն. Ա. [illegible] անց Նորոդո

— Ն. Մ. Խ Նորոդոմ Սիա

— Կ. Ե. Վ խավոր fare էջ):

— ՍՍՌՄ հության Նա Ֆինլանդիա սին (3-րդ էջ

— Նախաօ

ՊԱՏՄԱԿԱՆ ՄԵԾ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

(«ՊՐԱՎԴԱ»-Ի ՀՈՒԼԻՍԻ 3-Ի ԱՌԱՋՆՈՐԴՈՂԸ)

Երեկ «Պրավդա»-ում հրապարակվեց Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի որոշումը «Անհատի պաշտամունքը և նրա հետևանքները» հաղթահարելու մասին: Քաղաքական ու տեսական մեծ նշանակություն ունեցող այդ փաստաթղթում տրված է ստեղծագործական նախաձեռնության և ունկլյուզիան ընդհանրի այն հզոր վերելքի վառ պատկերը, որը ՍՄԿԿ XX համագումարի պատմական որոշումների շնորհիվ առաջացել է մեր պարտիայի և սովետական ամբողջ ժողովրդի շարքերում, եղբայրական կոմունիստական ու բանվորական պարտիաների շարքերում: Միջազգային ու ներքին կյանքի կարևորագույն երևույթների, ժամանակակից էտապում պարտիայի գործունեության մարքսիստական-լենինյան վերլուծության հիման վրա ՍՄԿԿ Կենտկոմը այդ որոշման մեջ պարզ պատասխաններ է տալիս կյանքի առաջադրած հարցերին, պարտիայի ու ժողովրդի ջանքերն ուղղում է ՍՄԿԿ XX համագումարի նշած գլխավոր խնդիրների լուծման նպատակին:

«ՍՄԿԿ Կենտրոնական Կոմիտեն գտնում անհրաժեշտ է,— ասված է ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ,— որ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի պատմական XX համագումարի որոշումներ արժանացան մեր ամբողջ պարտիայի, սովետական ամբողջ ժողովրդի, եղբայրական կոմունիստական ու բանվորական պարտիաների, սոցիալիստական երկրների մեծ ընտանիքի աշխատավորների, կապիտալիստական ու գաղութային երկրների միլիոնավոր մարդկանց լիակատար հավանության ու ջերմ պաշտպանության: Եվ դա հասկանալի է, քանի որ պարտիայի XX համագումարը, որը նոր էտապ նշանավորեց մարքսիզմ-լենինիզմի ստեղծագործական զարգացման մեջ, տվեց ժամանակակից միջազգային ու ներքին դրության խոր վերլուծությունը. Կոմունիստական պարտիային, սովետական ամբողջ ժողովրդին զինեց կոմունիզմի կառուցման հաստատ պայմարի ճոյակապ պլանով, բացեց նոր պատերազմի սպառնալիքը կանխելու, աշխատավորների շահերի համար բանվոր դասակարգի բոլոր պարտիաների միացյալ գործողությունների նոր հեռանկարներ»:

Պարտիայի XX համագումարից հետո մեծ ժամանակ չի անցել: Բայց արդեն այդ կարճ ժամանակամիջոցում համագումարի որոշումների կենսական մեծ ուժը իր կոնկրետ դրսևորումն է գտել կոմունիստական շինարարության բոլոր բնագավառներում սովետական ժողովրդի նոր հաջողությունների մեջ: Սովետական մարդիկ էլ ավելի սերտորեն են համախմբվել իրենց փորձված առաջնորդ Կոմունիստական պարտիայի շուրջը: Նրանք չի են վճռականությամբ այսուհետև ևս հաստատակամորեն կենսագործելու պարտիայի լենինյան իմաստուն քաղաքականությունը, սոցիալիստական Հայրենիքի հզորության հետագա ամրապնդման քաղաքականությունը, խաղաղության ու բոլոր երկրների հետ համագործակցելու քաղաքականությունը:

ՍՄԿԿ XX համագումարի որոշումները, դրանց պրակտիկ իրականացման գործում մեր պարտիայի ու սովետական ժողովրդի հաջողությունները դնվում են ամբողջ աշխարհի հասարակայնության ուշադրության կենտրոնում: Նրա խաղաղության ամրապնդման, ժողովուրդների կենսական շահերի համար պայքարի՝ համագումարի առաջ քաշած ծրագիրը բոլոր երկրների աշխատավորների մեջ ընդունվեց միահամուռ հավանությամբ և մեծ ոգևորություն առաջացրեց, ապա բանվոր դասակարգի քշնամիների բանակում այդ ծրագիրը տագնապ ու կատաղություն առաջացրեց: ԱՄՆ-ի և կապիտալիստական մի քանի այլ տերությունների ռեակցիոն շրջանները ակնհայտորեն անհանգստացած են, որ աճում է սոցիալիզմի գաղափարների ազդեցությունը, որ խաղաղասեր ժողովուրդները ակտիվ ու հետևողական պայքար են մղում միջազգային լարվածության մեղմացման համար, խաղաղության գործի ամրապնդման համար:

ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ նշվում է, որ վերջին ժամանակներս բուրժուական մամուլում ծավալվել է զրպարտչական հակասովետական լայն կամպանիա, որի համար որպես առիթ ռեակցիոն շրջանները փորձում են օգտագործել Սովետական Միության Կոմունիստական պարտիայի կողմից գաղափարված Ի. Վ. Ստալինի անձնավորության պաշտամունքի հետ կապված որոշ փաստեր: Սոցիալիզմի քշնամիները, կամայականորեն այդ կամպանիան, ամեն կերպ աշխատում են քաուլացնել պարտիայի XX համագումարի որոշումների ձգողական ուժը, բանվոր դասակարգի ու նրա պարտիաների ուշադրությունը շեղել համագումարի առաջ քաշած գլխավոր հարցերից, դիմում են ամեն տեսակ խորամանկությունների ու մեքենայությունների, որպեսզի խեղաթյուրեն Կոմունիստական պարտիայի քաղաքականությունը, ըստվեր գցեն մարքսիզմ-լենինիզմի մեծ դաղափարների վրա, խափանեն աշխատավորների վստահությունը դեպի աշխարհում առաջին սոցիալիզմի երկիրը՝ ՍՍՌՄ-ը, վարանում առաջացնեն միջազգային կոմունիստական ու բանվորական շարժման շարքերում:

Բուրժուազիայի գաղափարախոսները, անհատի պաշտամունքի առթիվ գործի դնելով զանազան զրպարտչական հերյուրանքներ, փորձում են քաքցընել այն փաստը, որ խոսքը վերաբերում է սովետական երկրի կյանքի անցյալ էտապին: Բայց նրանց չի հաջողվի խեղաթյուրել ճշմարտությունը, կեղծել պատմությունը: Ամբողջ աշխարհին հայտնի է, թե Կոմունիստական պարտիան ու Սովետական կառավարությունը ինչպիսի հաստատակամությամբ և վճռականությամբ են վերացնում անհատի պաշտամունքի հետևանքները, հաջողությամբ նոր խնդիրներ են իրագործում հանուն խաղաղության ամրապնդման, կոմունիզմի կառուցման, հզոր ժողովրդական լայն մասսաների:

ՍՄԿԿ Կենտրոնական Կոմիտեն իր որոշման մեջ ընդգծում է, որ անհատի պաշտամունքը քննադատելիս պարտիան նկատի է ունենում է մարքսիզմ-լենինիզմի սկզբունքներից, պատմության մեջ ժողովրդական մասսաների, պարտիաների և առանձին անհատների դերի մասին մարքսիստական-լենինյան թեորիայի դրույթներից: Ինչպես հայտնի է, ՍՄԿԿ XX համագումարում անհատի պաշտամունքի ու դրա հետևանքների հարցը խոր քննարկման ենթարկվեց:

Անհատի պաշտամունքի համարձակ և սկզբունքային քննադատությունը, որը ծավալվեց Կենտրոնական Կոմիտեի նախաձեռնությամբ, արժանացավ մեր ամբողջ պարտիայի, սովետական ամբողջ ժողովրդի պաշտպանությանը: Դա հանդիսացավ մեր պարտիայի և սովետական սոցիալիստական կարգի ուժի և ամրության նոր վառ վկայություն: Այդպես համարձակ ու արիաբար կարող էր վարվել միայն այն պարտիան, որը դաստիարակված է մարքսիզմ-լենինիզմի հեղկությունն սկզբունքներով, որն արտահայտում է ժողովրդի արմատական շահերը, վախենում նրա անսահման աջակցությունը: Պարտիան գտնում էր, որ եթե Ստալինի անձնավորության պաշտամունքի դեմ հանդես գալը նույնիսկ որոշ ժամանակավոր դժվարություններ էլ կառաջացնի, բայց և այնպես հեռանկարում, բանվոր դասակարգի արմատական շահերի և վերջնական նպատակների տեսակետից, դա հսկայական դրական արդյունք կտա: Միևնույն ժամանակ դա ամուր երաշխիք կլինի, որ մեր պարտիայում ու երկրում այսուհետև երբեք չկարողանան առաջանալ անհատի պաշտամունքի նման երևույթներ, որ այսուհետև պարտիայի ու երկրի ղեկավարումը իրականացվի կոլեկտիվ կերպով, մարքսիստական-լենինյան քաղաքականություն վարելու հիման վրա, միլիոնավոր աշխատավորների ստեղծագործական ակտիվ մասնակցությամբ:

Ինչպես մեր երկրում, այնպես էլ արտասահմանում, միլիոնավոր մարդիկ, ուսումնասիրելով ՍՄԿԿ կենտկոմի որոշումը, նրանում կգտնեն այն պատճառների սպառիչ բացատրությունը, որոնք հանգեցրին անհատի պաշտամունքի առաջացմանն ու տարածմանը, համոզվածություն կտան այն միջոցառումներին, որ Կոմունիստական պարտիայի, նրա Կենտրոնական Կոմիտեի կողմից կիրառվել ու կիրառվում են անհատի պաշտամունքն ու դրա հետևանքները հաղթահարելու ուղղությամբ: ՍՄԿԿ Կենտրոնական Կոմիտեն ամեն ինչպես այն օբյեկտիվ պայմանների խոր վերլուծությունը, որոնցում տարածում գտավ անհատի պաշտամունքը, այնպես էլ Ստալինի անձնական հատկությունների հետ կապված սուբյեկտիվ գործոնների վերլուծությունը, որոնց բացասական բնույթը նշել էր դեռևս Վ. Ի. Լենինը:

Սովետական մարդիկ որոշման մեջ մեծ գոհունակությամբ են կարդում. «Պարտիայի XX համագումարը և Ստալինի մահից հետո Կենտրոնական Կոմիտեի մարտը քաղաքականությունը վառ կերպով վկայում են, որ պարտիայի Կենտրոնական Կոմիտեի ներսում եղել է ղեկավարների լենինյան կորիզ, որոնք ճիշտ են հասկացել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության ասպարեզում հասունացած պահանջները... Կենտրոնական Կոմիտեի լենինյան կորիզը Ստալինի մահից անմիջապես հետո բոնեց անհատի պաշտամունքի ու դրա ծանր հետևանքների դեմ վճռական պայքարի ուղին: Այդ պայքարի դրական արդյունքները բարերար ազդեցություն են գործում մեր ժողովրդի ամբողջ բազմազան ստեղծարար գործունեության վրա»:

Սոցիալիզմի քշնամիները պնդում են, թե Ստալինի անձնավորության պաշտամունքը ոչ թե արդեն անցյալին պատկանող պատմական որոշակի պայմանների ծնունդն է, այլ հենց սովետական սիստեմի ծնունդը: Նման զրպարտչական պնդումները հերքվում են Սովետական պետության զարգացման ամբողջ պատմությամբ:

Մեր Հայրենիքը մեծ, դժվարին ու փառավոր ուղի է անցել Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ: Նա աշխարհում առաջին երկիրն էր, որը մարդկության համար հարթեց սոցիալիզմի ուղին: Նա հարկադրված եղավ հաղթահարել տնտեսական, կուլտուրական ու տեխնիկական դարավոր հետամնացությունը, կառուցել սոցիալիզմ դասակարգային քշնամիների ու երկրի ներսում նրանց գործակալների դեմ, ինչպես նաև միջազգային իմպերիալիստական ռեակցիայի ոտնձգությունների դեմ մղած կատաղի պայքարի պայմաններում: Ավելի քան քառորդ դար Սովետական երկիրը պաշարված ամրոցի պես գտնվում էր կապիտալիստական շրջապատման մեջ, իմպերիալիստական ագրեսիայի մշտական սպառնալիքի ներքո: Միջազգային ու ներքին բարդ իրադրությունը պահանջում էր երկաթյա կարգապահություն, ղեկավարության խստագույն կենտրոնացում: Այս պայմաններում հարկ էր լինում դիմել դեմոկրատիայի որոշ ժամանակավոր սահմանափակումների, որոնք արդարանում են կապիտալիստական շրջապատման պայմաններում մեր ժողովրդի պայքարի տրամաբանությամբ:

Պատմական փորձը վկայում է, որ սոցիալիստական շինարարության ճանապարհին եղած բոլոր դժվարությունները ու խոչընդոտները հաղթահարվեցին: Սովետական ժողովրդի և Կոմունիստական պարտիայի հերոսական ջանքերի շնորհիվ մեր երկիրը իր տեսակ ու կուլտուրական զարգացման մեջ վիթխարի թռիչք գործեց, դարձավ սոցիալիստական հզոր տերություն: Սովետական Միությունում սոցիալիզմի համաշխարհային-պատմական հաղթանակները նշանավորեցին պարտիայի լենինյան գլխավոր գծի հաղթանակը:

Սովետական Սոցիալիստական կարգի ուժն ու կենսականությունը, բուրժուական կարգի հանդեպ նրա գերազանցությունը ապացուցված են մեր երկրի տնտեսական ու կուլտուրական զարգացման՝ պատմության մեջ չտեսնված տեմպերով: Սովետական կարգը շարժման մեջ դրեց ժողովրդական մասսաների անսպառ ուժերը, միլիոնավոր մարդկանց կյանքում ներդրավեց հանուն սոցիալիզմի: Սովետական հասարակարգը ուժեղ է մասսաների դիտակցականությամբ: Նրա ճակատագիրը որոշվում է հերոսական բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության, ժողովրդական ինտելիգենցիայի ստեղծարար աշխատանքով: Հենց դրանով է բացատրվում, որ սովետական կարգը պատվով գուրս եկավ ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական ժամանակաշրջանի ամենածանր փորձություններից:

Ներկայումս Կենտրոնական Կոմիտեն, մեր ամբողջ պարտիան գլխավոր ջանքերը կենտրոնացնում են ՍՄԿԿ XX համագումարի որոշումների կենսագործման վրա, որոնցում տրված է սովետական կարգի հետագա ամրապնդման, տնտեսության ու կուլտուրայի զարգացման, աշխատավորների բարեկեցության անշեղ վերելքի, սոցիալիստական դեմոկրատիայի բոլոր ամենալայն զարգացման ծավալուն ծրագիրը: Դրան են ուղղված պարտիայի և կառավարության կողմից կիրառվող միջոցառումները միության բոլոր ռեսպուբլիկաների իրավունքները ու իրասությունն ընդլայնելու, օրինականությունը խստիվ պահպանելու, պլանավորման սիստեմը վերակառուցելու, տեղերի նախաձեռնությունը ծավալելու, տեղական Սովետների գործունեությունն ակտիվացնելու, քննադատությունն ու ինքնաքննադատությունը զարգացնելու ուղղությամբ:

Ելնելով պարտիայի XX համագումարի որոշումներից, ՍՄԿԿ Կենտրոնական Կոմիտեն պարտիական կազմակերպություններին կոչ է անում, մեր ամբողջ աշխատանքում հետևողականորեն պահպանել ժողովրդի՝ որպես պատմություն կերտողի, որպես մարդկության նյութական ու հոգևոր բոլոր հարստությունների ստեղծողի մասին, հասարակության վերափոխման համար, կոմունիզմի հաղթանակի համար մղվող ունկլյուզիոն պայքարում մարքսիստական պարտիայի վճռական դերի մասին մարքսիզմ-լենինիզմի ուսմունքի կարևորագույն դրույթները:

Հասատատակամորեն շարունակել բոլոր պարտիական կազմակերպություններում՝ վերից վար, պարտիական ղեկավարության լենինյան սկզբունքների, ամենից առաջ բարձրագույն սկզբունքի՝ կոլեկտիվ ղեկավարության խստիվ պահպանման, պարտիական կյանքի՝ մեր պարտիայի կանոնադրությամբ սահմանված նորմաների պահպանման, քննադատության և ինքնաքննադատության ծավալման ուղղությամբ վերջին տարիներս պարտիայի կենտրոնական Կոմիտեի կողմից կատարվող աշխատանքը:

Լիովին վերականգնել Սովետական Միության Կոնստիտուցիայում արտահայտված սովետական սոցիալիստական դեմոկրատիզմի սկզբունքները, մինչև վերջ ուղղել ունկլյուզիոն սոցիալիստական օրինականության խախտումները:

Մեր կադրերին, բոլոր կոմունիստներին և աշխատավորների ամենալայն մասսաներին մոբիլիզացնել պայքարելու վեհերուրդ հնդամյա պլանի խնդիրների պրակտիկ իրականացման համար, այդ նպատակով ամեն կերպ զարգացնելով պատմության իսկական կերտողների՝ մասսաների ստեղծագործական նախաձեռնությունն ու եռանդը:

«Անհատի պաշտամունքը և նրա հետևանքները հաղթահարելու մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը միջազգային մեծ նշանակություն ունի: Այդ փաստաթղթում ցույց է տրված, թե կոմունիստական ու բանվորական եղբայրական բոլոր պարտիաներում ինչպիսի լայն արձագանք ու հավանություն են գտել ՍՄԿԿ XX համագումարի պատմական որոշումները: Այնտեղ նշված է նաև, որ եղբայրական պարտիաները ժամանակին իմանում են սոցիալիզմի քշնամիների մանևրները, որոնք փորձում են վարանում մտցնել միջազգային կոմունիստական ու բանվորական շարժման շարքերը, և արժանի հակահարված են տալիս նրանց:

Ներկայումս, երբ անշուշտ մեծ է համաշխարհային սիստեմում դարձած սոցիալիզմի ուժը, երբ երևան է գալիս տարբեր երկրներում սոցիալիզմին անցնելու ուղիների յուրահատկությունը, բանվոր դասակարգի մարքսիստական պարտիաները, բնականաբար, պետք է պահպանեն և ամրապնդեն իրենց գաղափարական միասնությունն ու իներնացիոնալ եղբայրական համերաշխությունը նոր պատերազմի ապատնալիքի դեմ, մոնոպոլիստական կապիտալի հակաժողովրդական ուժերի դեմ մղվող պայքարում, որոնք ձգտում են ձնշել բոլոր ունկլյուզիոն և պրոգրեսիվ շարժումները: Մասնավորապես աշնպիսի փաստեր, ինչպես ԱՄՆ-ի սենատի կողմից խորհրդային գործակալների նոր ոտնձգությունների հանդեպ, որոնք ձգտում են քափանցել սոցիալիստական երկրները՝ աշխատավորներին վնասելու և նրանց նվաճումները քայքայելու նպատակով:

Մեր Հայրենիքը, որը առաջինը հարձակ սոցիալիզմի ուղին, այժմ գտնվում է իր ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում: Սովետական ժողովուրդը, դրնված ՍՄԿԿ XX համագումարի պատմական որոշումներով, համախմբված Կոմունիստական պարտիայի շուրջը, հաստատ ու վճռականորեն առաջ է գնում: Սովետական Միության հետ տերտ միասնությամբ սոցիալիզմի դրոշի տակ, մարքսիստական-լենինյան ուսմունքով ոգևորված, նոր կյանք են կառուցում ժողովրդական մեծ Չինաստանը, ժողովրդական դեմոկրատիայի բոլոր երկրները: Եղբայրության, դեմոկրատիայի ու սոցիալիզմի գաղափարները պաշտպանում են կապիտալիստական, գաղութային ու կախյալ երկրների բազմամիլիոն աշխատավորները: Մեր քշնամիների չարամիտ զրպարտչական ոչ մի հարձակում չի կարող կանգնեցնել դեպի կոմունիզմ՝ մարդկության պատմական զարգացման անհաղթահարելի ընթացքը: